Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒՆ N 2

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 21 ապրիլի 2023թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ Բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն Բանկի Խորհրդի թիվ 7/04-28.02.23թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև 2023թ. մարտի 22-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 2,001,710 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,530,024 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 76.44%-ը:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի սովորական բաժնետոմսերի բաժանման վերաբերյալ՝ 1 բաժնետոմսը = 5 բաժնետոմս համամասնությամբ:
3. Բանկի Կանոնադրության լրամշակված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	1,528,993 ձայն կամ մասնակիցների ձայների	99.933%
	դեմ	1,000 ձայն կամ մասնակիցների ձայների	0.065%
	ձեռնպահ	31 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
2. Երկրորդ հարց	կողմ	1,529,024 ձայն կամ մասնակիցների ձայների	99.935%
	դեմ	1,000 ձայն կամ մասնակիցների ձայների	0.065%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
3. Երրորդ հարց	կողմ	1,528,996 ձայն կամ մասնակիցների ձայների	99.933%
	դեմ	1,000 ձայն կամ մասնակիցների ձայների	0.065%

ձեռնպահ	28 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան

2. Իրականացնել Բանկի սովորական բաժնետոմսերի բաժանում՝ 1 բաժնետոմսը = 5 բաժնետոմս համամասնությամբ:

3. Հաստատել Բանկի Կանոնադրության լրամշակված տարբերակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Ա. Աղամյան

Ե. Ալեքսանյան